

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՍԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՐՆՈՒՄ ՓՈՒԵՐԻ ՀԱՅՈՐԴԱՅՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՆՆՈՒԻ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳԻՄՈՒՍՔՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ  
ԴՊՐՈՑՑՈՒՄ

ՃԳ. 00. 02 -«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Ս Ա Գ Ի Ռ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

**Գիտական դեկան՝** բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝ **Ա. Վ. Գալստյան**

**Պաշտոնական ընդիմախոսներ՝** մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝ **Լ.Ա. Սահակյան**  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝ **Գ. Լ. Խալաթյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 3-ին՝  
ժամը 14:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավար-  
ժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի  
նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հունիսի 3-ին:

**Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝** մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝ **Ա. Վ. Սվաջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը հայտնվել է իր զարգացման մի փուլում, երբ փորձ է արվում աշխարհի կրթական մարտահրավերների և ազգային առանձնահատկությունների համադրմամբ ստեղծել նոր կրթական միջավայր:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը 2000 թվականից բռնել էր հիմնարար բարեփոխումների ուղին: 2012 թվականին ավարտուն տեսք ունեցավ 12-ամյա կրթական համակարգի բովանդակային դաշտը, որը ենթադրում է դասավանդման համապատասխան մեթոդաբանության մշակում՝ ըստ բարեփոխված դպրոցի կրթական նոր աստիճանների և դրանց հաջորդական փուլերի:

Այսօր շատ է խոսվում չափորոշչական կրթության մասին, սակայն դեռևս հեռու ենք դրա իրականացումից, որովհետև մշակված չէ չափորոշչի հիմնավոր կառուցվող ուսումնական գործունեությունն ըստ փուլերի, տրված չէ այդ գործունեության մանկավարժահոգեբանական հիմնավորումը: Եռամյա տարրական դպրոցից քառամյա դպրոցի անցումը, վեց տարեկանից ուսուցման կազմակերպումը առավել արդիական են դարձնում այս խնդիրը: Իրականում տարրական դպրոցի կրթության նոր բովանդակությունը մշակելիս մասնագետները ոչ թե համակողմանիորեն հաշվի առան երեխայի տարիքն ու պահանջմունքները, և ըստ դրա մշակեցին ուսուցման համապատասխան մեթոդներ, այլ պարզապես երեխան «հարմարեցվեց» գործող ծրագրերին՝ հիմնականում նախկին բովանդակությունը մեխանիկորեն չորս տարիների մեջ բաշխելու ձանապարհով: Վերջինս տարրական դպրոցում իրականացվող կրթարաստիարակչական գործընթացը հոգեբանամակավարժական տեսանկյունից դարձնում է խոցելի: Տարրական դպրոցի՝ մինչ օրս առկա մեթոդական հարուստ ուսումնասիրություններն անդրադարձել են դիդակտիկայի առանձին բաժինների, տարրական դպրոցի մեթոդիկային ընդհանրապես, սակայն կրթական նոր բարեփոխումների արդյունքում դասավանդ-

ման փուլերի հաջորդայնության խնդիրը դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

Մասնագիտական աղբյուրների վերլուծությունը հստակորոշ ցույց է տալիս, որ ՀՀ-ում գրեթե բացակայում են գիտամեթոդական հետազոտություններ՝ նվիրված մայրենիի դասավանդման փուլերի հաջորդայնության հիմնախնդրին:

Հայոց լեզվի ուսուցման մեթոդաբանության մեջ դասավանդման հաջորդայնություն ասելով՝ պատկերացվել է միայն մատուցվող ուսումնական նյութի համաչափ բաշխումն ըստ դասարանների, բովանդակության մատուցման հաջորդական քայլերի պահպանումը, այնինչ հաջորդայնության խնդիրը վերաբերում է երեխայի և կազմաքանախոսական, և հոգեբանական, և մտավոր առանձնահատկություններին, նաև գնահատման տեսակների ընտրությանը:

Մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հետևյալ հիմնախնդիրներով՝

ա) դեռևս 12-ամյա հանրակրթական դպրոցի տարրական կրթության մեթոդիկայում հաշվի առնված չեն դասարանից դասարան անցման տարիքային փոփոխությունները, դրանցով պայմանավորված՝ մայրենիի ծրագրային նյութի յուրացման դժվարությունները,

բ) շեշտադրված չեն մայրենիի ուսուցման յուրաքանչյուր փուլի գերակա խնդիրները, մշակված չեն դրանց լուծման ուղղությամբ իրականացվող մեթոդական համալիր մոտեցումները:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ** տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացն է:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ** տարրական կրթության համակարգում մայրենիի դասավանդման փուլերի հաջորդայնությունն ապահովող մեթոդական համակարգն է:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ** մայրենիի դասավանդման փուլերի հաջորդայնության ապահովման տեսական հիմքերի մշակումն է, համապա-

տապսան մեթոդական համակարգի կառուցումը և դրա կիրառումը տարրական դասարաններում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾՈՒԹՅՈՒՆ**: Տարրական դպրոցում մայրենի դասվանդման գործընթացը կլինի արդյունավետ, եթե՝

- ապահովվի ուսուցման փուլային հաջորդայնությունը,
- հաշվի առնվեն սովորողների տարրիքային առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված է մայրենի ծրագրային նյութերի յուրացման մատչելիությունը,
- շեշտադրվեն մայրենի ուսուցման յուրաքանչյուր փուլի գերականապատակներն ու խնդիրները, և մշակվեն դրանց լուծման ուղղությամբ իրականացվող մեթոդական համալիր մոտեցումներ, ուղիներ ու միջոցներ,
- մշակվի, գործնականորեն հիմնավորվի և տարրական դպրոցում ներդրվի մայրենի ուսուցման փուլային հաջորդայնության արդյունավետ կազմակերպման մեթոդների և միջոցների համակարգ:

Հետազոտության վարկածի հավաստիությունը ստուգելու համար մեր կողմից առաջադրվել են **հետազոտության խնդիրներ՝**

- դիտարկել և վերլուծել հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հիգիենամանկավարժական և մեթոդական գրականությունը,
- ուսումնասիրել և վերլուծել տարրական դպրոցում մայրենի ուսուցման փոխհաջորդող փուլերի և տարրականից միջին դպրոց անցման առկա վիճակը ՀՀ հանրակրթական դպրոցներում,
- ուսումնասիրել տարրական դպրոցի՝ դասարանից դասարան փոխհաջորդող փուլերում մայրենի ծրագրային բովանդակության յուրացման գործընթացի առանձնահատկությունները,
- սահմանել մայրենի ուսուցման յուրաքանչյուր հաջորդական փուլի նպատակներն ու խնդիրները, մշակել բարձր արդյունավետության հասնելու ուղիներ ու հնարներ,
- բացահայտել և գիտափորձով հիմնավորել հանրակրթական տասներկուանյա դպրոցի առաջին օղակում յուրաքանչյուր դասարանի

ուսումնական նյութի բովանդակային սահմանները, դասարանից դասարան դրանց տրամաբանական հաջորդայնությունը,

- մշակել և փորձարկել մայրենիի ուսուցման հաջորդայնությունն ապահովող, սովորողի զգայարանների վրա հենված ուսուցման, մտածողությունն ու տրամաբանությունը զարգացնող մեթոդների համալիր,
- փորձով ստուգել և տարրական դպրոցում ներդնել ուսուցման հաջորդայնությունն ապահովող մեր կողմից առաջարկվող մեթոդական համակարգը:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ ԾԱՌԱՅԵԼ՝**

- մանկավարժության բնագավառում փիլիսոփայական հայեցակարգային մոտեցումները, տեսական և գործնական դրույթները (Ժ. Ոուսու, Յ. Բարանսկի, Ա. Լեռնտև, Մ. Աստվածատրյան, Զ. Գյուլամիրյան, Լ. Ասատրյան և այլք),
- հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժության մեջ գոյություն ունեցող ընդունելի տեսակետները (Ղ. Աղյան, Խ. Վրովյան, Ա. Տերգրիգորյան, Լ. Վիգոտսկի, Ռ. Խոն, Տ. Վալույսկայա, Լ. Իյենկո, Ի. Կոշմինա, Ի. Պողլասի, Կ. Ռոջերս և այլք),
- ուսուցման տեխնոլոգիական համակարգի մասը կազմող ավանդական և ժամանակակից մեթոդներն ու միջոցները, հետազոտական և փորձարարական մեթոդիկան (Ա. Բահարյան, Զ. Գյուլամիրյան, Ն. Զորայան, Գ. Էղիլյան, Հ. Հինդյան, Լ. Լանդա, Յ. Կոմենսկի, Ե. Անդրեևա, Լ. Զինի, Է. Ղյունֆորտ և այլք),
- մանկավարժության մեջ հայտնի անձնակողմնորոշիչ և ձանաչողական կարողությունների զարգացման ուղղված տեսությունները (Ղ. Ղյուի, Հ. Գարդմեր, Ժ. Պիաժե, Լ. Վիգոտսկի, Ռ. Շտայներ, Ի. Խարլամով, Ա. Լեռնտև և այլք),
- հիմնական դպրոցի մայրենիի և հայոց լեզվի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը:

Դրված խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետազոտության համապատասխան **մեթոդներ՝**

**տեսական-** քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ ավանդական և ժամանակակից մասնագիտական գրականության ուսումնասիրություն, առողջապահական և կրթական չափորոշչային փաստաթղթերի ուսումնասիրում,  
**էմպիրիկ- I-IV** դասարաններում իրականացվող մայրենիի դասերի ունկնդրում, նախնական վարկածի հոգեբանամանկավարժական փորձարարության իրականացում,

**վիճակագրական-** դիտարկում, փորձարարական ուսուցում, թեստավորում (հայտորոշիչ և ստուգիչ), փորձարարական տվյալների որակական և քանակական մշակում:

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:**

- ա) Դիտարկվել են մայրենիի ուսուցման գործընթացում հաջորդայնության ապահովման լեզվական և մեթոդամանկավարժական հիմքերը:
- բ) Վերլուծվել են տարրական դպրոցում մայրենիի դասավանդման փուլային հաջորդայնության ապահովման հիմնախնդիրները:
- գ) Հաջորդայնությունը դիտարկվել և փորձարկվել է ոչ միայն ուսումնական բովանդակության մատուցման հաջորդական քայլերի պահպանման, այլև երեխայի կազմաքննուսական, հոգեբանական և մտածողության զարգացման, սովորողին գնահատելու ձևերի ընտրության տեսանկյուններից:
- դ) Որոշվել են տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հաջորդայնությունն ապահովող հիմնական գիտելիքներն ու ունակությունները յուրաքանչյուր դասարանի համար՝ ըստ առաջարկվող ծրագրերի:
- ե) Տեսականորեն մշակվել է տարրական դասարանների սովորողների մեջ խոսքի մշակույթի ձևավորման և գրելու կարողությունների զարգացման, հաջորդայնության ապահովման մեթոդական համակարգ և փորձով ստուգվել:
- զ) Մշակվել են յուրաքանչյուր դասարանում մայրենիից ուսուցանվող ծրագրային նյութերի բովանդակությունը և ուսուցման մեթոդների, հնարների

ու տեխնոլոգիամերի համալիր՝ համապատասխանեցված տարիքային խմբի առանձնահատկություններին:

է) Հաջորդայնությունը դիտարկվել է նաև միջին դպրոցի 5-6-րդ դասարան-ներում անցման փուլի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների, մայրենին միասնացված ուսուցանելու ռազմավարության հիմնավորմամբ:

**ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Մշակվել են տարրական դասարան-ներում մայրենին դասավանդման հաջորդայնության ապահովման, ինչպես նաև տարրականից միջին դպրոց անցման փուլերի գիտատեսական, մեթոդաբանական հիմքերը, տրվել են դրանց հոգեբանամանկավարժական հիմնավորումները:

**ԳՈՐԾՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Դասընթացի հաջորդայնությունն ապահովող մայրենին ուսուցման մեթոդական համակարգը կարող է կիրառվել ծրագրաստեղծ ու դասագրքաստեղծ հեղինակային խմբերի կողմից, իսկ մշակված առաջադրանքների համալիրը կարող է օգտագործվել ուսուցիչների կողմից որպես ուսումնական նյութ՝ ուսուցումն առավել արդյունավետ և խթանիչ դարձնելու նպատակով:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ** ապահովված է մեթոդաբանական դրույթներով և մեթոդների համալիր գործածությամբ, եզրակացություններով:

#### **ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:**

1. Հաջորդայնությունն իբրև սկզբունք տարրական դպրոցում պիտի ապահովել ոչ միայն մայրենին ուսուցման բովանդակության յուրացման քայլերի, այլև գնահատման տեսակների ընտրության գործընթացում՝ հաշվի առնելով սովորողի կազմաքանախոսական, հոգեբանական, մտածողության աստիճանական գարզացման առանձնահատկությունները:
2. Գրաձանաչության նախայիքնական շրջանում սովորողների բազմաբնույթ մտածողության խթանումը պայմանավորող մեթոդական հնարների և միջոցների համակարգի արդյունավետությունը ուսումնական առարկաների բազմաշերտ և բազմակողմանի միասնացման համա-

տեքստում՝ որպես բազմաբնույթ մտածողության գարգացման էական գործոն:

3. Տնային հանձնարարությունը դիտել որպես մայրենիի ուսուցման հաջորդականության փուլերից մեկը, որն իր բովանդակության և կառուցվածքի ինքնատիպությամբ կնպաստի կրտսեր դպրոցականի բարձրագույն մտածողության ձևավորմանը:
4. Տարրականից միջին դպրոց անցման փուլում աշակերտի ուսումնական գործունեության մեթոդամանկավարժական գործուների հստակեցումը, դրանց հաղթահարման միջոցները:
5. Հիմնական դպրոցի 5-6-րդ դասարաններում միասնացված ուսուցման անհրաժեշտության հիմնավորումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ** են հանդիսացել Երևան քաղաքի N53, N114 հանրակրթական դպրոցները և «Արեգնազան» ոչ պետական կրթակամալիրը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԵՐԸ. առաջին՝ որոնողական փուլում (2009-2010թթ.), դիտարկվել են մայրենիի դասավանդման փուլային հաջորդականության ապահովման հնարավորությունները գործող ծրագրի և դասագրքի պայմաններում, ձևակերպվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, վարկածը:**

**Երկրորդ՝ փորձարարական փուլում (2010-2011 թթ.),** ուսումնասիրվել է դիտարկվող հիմնախնդրի դրվագքը մանկավարժամեթոդական գրականության մեջ, բացահայտվել տարրական դասարանների սովորողների ընթերցելու և գրելու կարողությունների ձևավորման ու գարգացման հաջորդայնության ապահովման հնարավորությունները:

**Երրորդ՝ ընդհանուրագնող փուլում (2011-2012 թթ.),** մշակվել և փորձարարության նպատակով հիմնավորվել է տարրական դպրոցում մայրենիի դասավանդման արդյունավետ մեթոդների և միջոցների համալիր, ամփոփվել են տեսական ուսումնասիրությունները և գիտապրակտիկ գործունեությունը, շարադրվել է ատենախոսությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅՈՒՆԸ** կատարվել է փորձարկվող դպրոցներում, և Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մայրենի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, գիտաժողովներում, տպագրված հոդվածներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ:** Ատենախոսությունը բաղկացած է 180 համակարգչային էջից: Այն ընդգրկում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն, գրականության ցանկ, 5 աղյուսակ, 6 գծապատկեր և հավելված:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈԿԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵջ ԻՀԻՄՆԱՎՈՐՎԵԼ Է ԹԵՆԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,** սահմանվել են ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, խնդիրները, մեթոդական իհմքը, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական նորույթը, տեսական ու գործնական արժեքները, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող իհմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ «Մայրենի դասավանդման փուլային հաջորդայնության իհմնախնդիրը հայկական դպրոցում», բաղկացած է երեք ենթագլուխներից՝

1. 1. «Մայրենի ուսումնասիրման գործընթացի պատմական դրվագը հայկական դպրոցում»: Այս ենթագլուխը, վաղ միջնադարից սկսած, ներկայացվել են հայ քերականների և մեթոդիստների աշխատությունները դասավանդման հաջորդայնության գիտամեթոդական իհմնավորվածության տեսանկյունից:

1.2. «Տարրական դպրոցում մայրենի ուսումնասիրման համեմատական վերլուծություն հաջորդայնության ապահովման համատեքստում», ուր վերլուծվել են անցյալի և ներկայիս մեթոդիստների մոտեցումները՝ կապված դասավանդման հաջորդայնության ապահովման կարևորության հետ, հստակեցվել են շեշտադրումները, ամրագրվել բացթողումները:

**1. 3. «Մայրենիի փուլային ուսուցման անհրաժեշտության հոգեբանամանկավարժական հիմնավորումը»**, որտեղ առանձնակի կարևորվել է առաջին դասարանի նախագրային շրջանը, որի ձիշտ կազմակերպումից է կախված հաջորդ փուլերի արդյունավետությունը: Ծեշտադրվել են զգայարանների և հենաշարժողական համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները՝ քննելով դրանք կազմաքանակուսական՝ տեսողության, լսողության, հոտառության, շոշափելիքի, հավասարակշռության, շարժողունակության զարգացման տեսանկյուններից: Տրվել են դրանց զարգացմանն ուղղված մեթոդական երաշխավորություններ:

Երկրորդ գլուխը՝ **«Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման բովանդակության մեջ հաջորդայնության ապահովումը՝ որպես միջին դպրոցում հայոց լեզվի ուսումնասիրման արդյունավետ հիմք»**, բաղկացած է 7 ենթագլուխներից՝

**2.1. «Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում հաջորդայնության ապահովման լեզվական և մանկավարժական հիմքերը»:** Այստեղ ներկայացվել է չափորոշչում և տարրական դասարանների ծրագրում ամրագրված ուսումնական նյութի բովանդակությունն ըստ առանձին դասարանների՝ քննելով դրանք հաջորդայնության ապահովման տեսանկյունից: Տրվել են ուսումնական նյութի ուսուցման մեթոդական երաշխավորություններ: Ուսուցումն առավել մատչելի դարձնելու նպատակով մեր կողմից ստեղծվել և փորձարկվել են մագմիսական գրատախտակ ու էլեկտրոնային նյութերի նմուշներ:

**2.2. «Ընթերցողական և գրելու կարողությունների ձևավորման և զարգացման հաջորդայնության ապահովումը տարրական դպրոցում»:** Առաջարկներ են ներկայացվել սովորողների կարդալու սկզբնական կարողության արագ, հեշտ և ձիշտ ձևավորման համար, ներկայացվել են կարդալու հաջորդական փուլերը, հստակեցվել է ընթերցանության նյութերի ընտությունն ըստ տարիքային հաջորդական փուլերի, մշակվել են սովորողների ինքնուրույն ընթերցանությունը խթանող մի շարք հնարներ: Հաջորդական քայլերով ներկայացվել է գրելու կարողության ձևավորման գործընթացը:

**2.3. «Ուսումնական առարկաների բազմաշերտ և բազմակողմանի միասնացումը տարրական դասարաններում» Ենթագլխում շեշտադրվել են արդի մանկավարժական մարտահրավերները, չափորոշչակեն կրթության բնույթը, որոնք միտված են երեխային որպես ապագայի գործող քաղաքացի պատրաստելուն: Ներկայացված են միասնացման առավել ընդհանուր ձևերն առանձին-առանձին, առաջարկվել են միասնացված ուսուցման կազմակերպման տարրեր մեթոդական հնարներ:**

**2.4. «Տնային առաջադրանքների կազմակերպման անհրաժեշտությունը, սկզբունքներն ու ծավալը»: Ենթագլխում խոսվել է տնային հանձնարարությունների նպատակահարմարության, ծավալի, բովանդակության, կազմակերպման ձևերի և առկա վիճակի մասին: Վերլուծվել են անցկացրած հարցման արդյունքները, քննվել են մեզ հանդիպած ուսումնասիրությունները՝ բովանդակային և կազմակերպական առումներով, արվել են առաջարկներ:**

**2.5. «Քազմաքննության մտածողության զարգացումը՝ որպես մայրենի ուսուցման փուլերի արդյունավետության բարձրացման միջոց»: Այստեղ շեշտադրվել է զգայարանների զարգացմանը միտված ուսուցման արդյունավետությունը՝ հիմնվելով ժամանակակից տեսությունների վրա:**

**2.6. «Տարրական դպրոցից միջին դպրոց անցման դժվարությունները և դրանց հաղթահարման մեթոդական հնարները» Ենթագլխում ներկայացվել են այդ ձգնաժամային, անցումային փուլի ուսումնական, ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական կողմերն առանձին-առանձին, տրվել են հանդիպած դժվարությունների հաղթահարման մեթոդական հնարներ:**

**2.7. «Միասնացված ուսուցման շարունակականության ապահովումը տարրականից միջին դպրոց անցման փուլում», ուր ներկայացվել են տարիքային որոշակի փուլում կրթության բովանդակության միասնացման անհրաժեշտությունը՝ ըստ տարրեր մանկավարժների դիտարկումների, 5-6-րդ դասարաններում մայրենին միասնացված ուսումնասիրելու կրթական նոր ռազմավարությունը, երեխայի կազմաքննախոսական առանձնահատկությունները, վերլուծվել են մայրենին 5-6-րդ դասարաններում միասնացված ուսումնասիրելու նպատակահարմարությունը պարզելու նպատակով**

անցկացրած հարցումների արդյունքները, շեշտադրվել են միասնացված ու սուցման առավելությունները:

Երրորդ գլուխը՝ «Մայրենից սովորողների գիտելիքների և կարողությունների ստուգման ձևերը տարրական դպրոցում», բաղկացած է 2 ենթագլուխներից՝

**3.1. «Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման առանձնահատկություններն ըստ դասարանների»:** Այս ենթագլուխում դիտարկվել են կրթական նոր բարեփոխումների արդյունքում մշակված գնահատման նոր համակարգի, նրա տեսակների, ներկայում գործածվող միավորային գնահատման, նրա բաղադրիչների և տարրեկան գնահատականի ծևազդրման սկզբունքները, յուրաքանչյուր դասարանում սովորողին ներկայացվող գիտելիքի նվազագույն պահանջները:

**3.2. «Հետազոտության փորձաքննությունը և ներդրումը»:** Այստեղ ներկայացվել են առաջարկվող դրույթների, համապատասխան մեթոդների և մշակված նյութերի արդյունավետությունը ստուգելու նպատակով մերկորդից իրականացված փորձաքննության արդյունքները: Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի Ա. Խանջյանի անվան N 53, Խ. Ղաշտենցի անվան N114 հանրակրթական դպրոցները և «Արեգնազան» ոչ պետական կրթահամալիրը:

Ընտրվել են երկուական առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ ստուգողական և փորձարարական դասարանները: Նշված դասարաններում տրվել են արծանագրական գրավոր աշխատանքներ՝ որոշելու հետազոտության համար անհրաժեշտ ելակետային տվյալները:

Ստուգողական դասարաններում ուսուցումն ու գնահատումը կազմակերպվել է ավանդական մեթոդով, հանրակրթական դպրոցի ծրագրերով ու դասագրքերով, իսկ փորձարարական դասարաններում, հավատարիմ մնալով ծրագրին, կիրառվել են նաև մեր կողմից առաջարկվող մեթոդներն ու լրացուցիչ ուսումնական նյութերը:

Երեխանների բազմաթիվ մտածողությունը, ուսումնական նյութի հիմնավորված հաջորդայնության պահպանման արդյունքում ծեռք բերած ձա-

նաշողության, խոսքի, մտածողության, ինքնադրսակորման որակմերը, ստացած գիտելիքը ծանոթ և անծանոթ իրավիճակներում դրսառելու, կարդացածը հասկանալու, ուսումնական այլ առարկաներում ևս մայրենին որպես դասավանդման լեզու կիրառելու կարողությունները բացահայտելու, երեխաների փոքրիկ կենսակիրճից վարժագծային դիտարկումներ անելու նպատակով երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում տրվել են ստուգողական թեստեր: Դրանք կազմվել են չափորոշչային պահանջներին համապատասխան և ընդգրկել են կրթական երեք բաղադրիչներին էլ՝ գիտելիքն, կարողությանն ու հմտությանը, արժեքային համակարգին վերաբերող առաջադրանքներ:

Տրված թեստերը ստուգելուց հետո արձանագրվել է, որ փորձարարական դասարաններում ավելի շատ են ծրագրային նյութը յուրացրած, անմիջական և հետաքրքիր բովանդակությամբ կապակցված խոսք կազմող, նոր և հետաքրքիր լուծումներ գտնելու կարողություն դրսառող, կարդացածը հասկացող և գնահատող աշակերտները: Ստուգողական դասարաններում սովորողները հիմնականում ճիշտ էին պատասխանել պարզապես գիտելիքի իմացություն պահանջող հարցերին, իսկ ստեղծագործական ունակություններ և տրամաբանություն պարունակող առաջադրանքներում թերացել էին, չին կատարել կամ պահանջը չին հասկացել:

Փորձաքննության վերլուծության քանակական արդյունքներն ըստ դասարանների ներկայացված են ստորև բերված այսուսակներում (այսուսակ 1, 2, 3):

#### Այսուսակ 1

Երկրորդ դասարանի փորձաքննության քանակական արդյունքները

Խումբը	$n$	$\sum_{i=1}^n X_i$	$\bar{X}$
Փորձարարական	69	483	7
Ստուգողական	65	384	5,9

Երրորդ դասարանի փորձաքննության քանակական արդյունքները

Խումբը	$n$	$\sum_{i=1}^n X_i$	$\bar{X}$
Փորձարարական	65	434	6,68
Ստուգողական	63	360	5,72

Չորրորդ դասարանի փորձաքննության քանակական արդյունքները

Խումբը	$n$	$\sum_{i=1}^n X_i$	$\bar{X}$
Փորձարարական	68	462	6,8
Ստուգողական	62	366	5,9

Ասպիսով, ստացված տվյալների համեմատական վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ տարրական դպրոցում ուսուցման հաջորդանությունը ձիշտ հերթագայությամբ ապահովելը ուսումնառությունը դարձնում է առավել արդյունավետ և խթանիչ: Ստուգողական դասարանների հետ համեմատած՝ փորձարարական դասարաններում արձանագրվել է միշտն զնահատականի 15-17% աճ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

- Գրական աղյուրների ուսումնասիրությունը, վերլուծությունն ու ընդհանրացումը փաստեցին, որ հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի պատմական զարգացման բոլոր փուլերում դասավանդման հաջորդայնություն ասելով՝ հիմնականում հասկացվել է ուսումնական նյութի բովանդակային հերթագայությունը՝ պայմանավորված ուսուցանվող նյութի աստիճանական բարդացման տրամաբանությամբ (պարզից բարդ, հեշտից դժվար, ծանո-

թից անծանոթ): Փորձաքննության արդյունքում բացահայտվել է, որ դասավանդման հաջորդանությունը վերաբերում է նաև Երեխայի կազմաբնախոսական (զգայարանների և ֆիզիկական համակարգերի զարգացում), մտածողության աստիճանական զարգացման և նյութի մատուցման առավել արդյունավետ մեթոդների ընտրության դասակարգմանն ըստ դասարանների կամ այդ փուլերի առանձին օլակների, նաև գնահատման տեսակների ընտրությանը:

2. Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ տարրական դպրոցում սովորողների բազմաբնույթ մտածողությունը զարգացնող ուսուցում կազմակերպելու դեպքում մեծանում է Երեխաների հետաքրքրվածությունը և ուսման արդյունավետությունը:

3. Փորձաքննությամբ հիմնավորվել է, որ կարդալու սկզբնական կարողության համար անհրաժեշտ նախադրյաներ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել ուսումնական մյուս առարկաների ընձեռած հնարավորությունները և:

4. Հետազոտությունը բացահայտել է, որ միասնացված (ինտեգրված) ուսուցման կազմակերպումը նպաստում է շրջապատող աշխարհի ամբողջական ընկալմանը, ուստի անհրաժեշտ է տարրական կրթության մեթոդիկայում կիրառել միասնացման հնարավոր բոլոր տեսակները:

5. Փորձաքննության ընթացքում դասավանդման հաջորդանության պահպանման հիմքում դրվել է կրթության կազմակերպումը բնության համանմանությամբ, նրա զարգացմանն ու փոփոխություններին հետևելով, բնության և մարդու միջև ընդհանրություններ և տարբերություններ գտնելով: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ նման ուսուցման կազմակերպումը ընդլայնում է Երեխաների ձանաչողությունը, հնարավորություն է տալիս բնության երևոյթները համեմատելու մարդու և նրա մեջ կատարվող փոփոխությունների հետ, Երեխայի մեջ վառ է պահում ձանաչողության հանդեպ հետաքրքրությունը:

6. Անցկացրած ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տվել, որ անհրաժեշտ է վերանայել տնային հանձնարարությունների կշիռը,

ծավալը և բովանդակությունն ըստ դասարանների: Առաջարկվել են դրանց կազմակերպման նոր մեխանիզմներ՝ բովանդակային և կազմակերպական առումներով:

7. Դասալսումների արդյունքում պարզվել է, որ առկա են բազում դժվարություններ տարրականից միջին դպրոց անցման փուլում, առանձնապես կրթության բովանդակության միասնացման (ինտեգրման) գաղափարի ընկալման հարցում: Հիմնավորվել է միասնացված ուսուցման գաղափարաբանությունը, պարզաբանվել նոր ռազմավարության դրական և բացասական կողմերը, առաջարկվել են միասնացված ուսուցման կազմակերպման մի քանի ձևեր, ներկայացվել դասերի նմուշներ: Եկել ենք այն եզրահանգման, որ տարրական և միջին դասարանների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում անհրաժեշտ է տեղ հատկացնել այս հարցերի քննարկմանը:

8. Ընտրված դպրոցներում անցկացված փորձաքննությունը ցույց է տվել, որ անհրաժեշտ է պահպանել հաջորդայնությունը գնահատման միավորային և ձևավորող տեսակների կիրառման ընթացքում՝ տարրական դասարաններում գերապատվությունը տալով ձևավորող գնահատմանը:

9. Փորձաքննությունը հաստատել է մշակված մեթոդական առաջարկությունների մատչելիությունը, կենսունակությունն ու արդյունավետությունը:

Հավելվածում ներկայացվել են 2-րդ-4-րդ դասարանների թեստային առաջադրանքներ:

Գրականության ցանկը պարունակում է տպագրությունների 137 անվանում և 4 էլեկտրոնային հղում:

**Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

- Գ. Մկրտչյան, Որ բառերը ժաման, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 2005 թ., N 3-4, էջ 101-103:
- Գ. Մկրտչյան, Ուղղագրական ժամանց /ուսումնական ձեռնարկ 5-րդ դասարանի համար/, Երևան, «Ստամպա», 2007, 176 էջ:

3. Գ. Մկրտչյան, Ա. Սարգսյան, Հ. Շարիսաքումյան, Հայոց լեզվի և տեղեկատվության միավորված դասեր, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 2008 թ., N 7-8, էջ 57-62:
4. Գ. Մկրտչյան, Միասնացված ուսուցման անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Մանկավարժություն, 2009 թ., N 7-8, էջ 45-53:
5. Գ. Մկրտչյան, Ն. Տողանյան, Մայրենի-5,6 (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Զանգակ-97», 2009 թ., 85 էջ:
6. Գ. Մկրտչյան, Տնային հանձնարարությունների դերը դպրոցականների ուսումնական գործունեության մեջ, Մանկավարժություն, 2010 թ. N 6, էջ 8-19:
7. Գ. Մկրտչյան, Տարրականից միջին դպրոց անցման դժվարությունները, Մանկավարժություն, 2011 թ. N2, էջ 4-11:
8. Գ. Մկրտչյան, Մայրենիի դասավանդման հաջորդայնության խնդիրը տարրական դպրոցում, Մանկավարժություն, 2011 թ. N7, էջ 39-46:
9. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Հայոց լեզվի գործնական առաջադրանքների ժողովածու, Երևան, 2011, «Մանմար», 136 էջ:
10. Գ. Մկրտչյան, Մногоступенчатая и разносторонняя интеграция учебных предметов в начальной школе, Тезисы докладов международной научной конференции <<Образование, наука и экономика в вузах. Интеграция в международное образовательное пространство>>, Ереван, 2011, ст. 226-227.
11. Գ. Մկրտչյան, Կարդալու սկզբնական կարողության ձևավորմանը նպաստող նախադրյալների ստեղծում, Մանկավարժություն, 2013, N1, էջ 31-36:
12. Գ. Մկրտչյան, Կերպարվեստի դասաժամների ձիշտ կազմակերպումը՝ որպես կապակցված խոսքի ձևավորման նախադրյալ, «Որակյալ ուսուցման հիմնախնդիրները << հանրակրթական դպրոցներում» գիտաժողովի հոդվածների հավաքածու (մաս 1), Երևան, «Հաշ ընդ հաշ փրկմթ», 2013, էջ 233-237:

МКРТЧЯН ГАЯНЕ ВЛАДИМИРОВНА

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЕ ОСНОВЫ ПРОБЛЕМЫ  
ПРЕЕМСТВЕННОСТИ ЭТАПОВ ОБУЧЕНИЯ РОДНОМУ ЯЗЫКУ В  
НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - «Методика преподавания и воспитания» (армянский язык).

Защита диссертации состоится 3-го июля 2014г. в 14:00 на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абояна, по адресу: 010, Ереван, ул. Тиграна Меца - 17.

**РЕЗЮМЕ**

**АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.** Проводимые методические исследования, касающиеся начальной школы, до настоящего времени посвящались отдельным разделам дидактики, методике преподавания, однако в свете образовательных реформ вопрос о преемственности этапов преподавания до сих пор остается актуальным и подлежит серьезному исследованию.

Актуальность исследования обусловлена определенными задачами методики преподавания армянского языка в начальных классах 12-летней общеобразовательной школы, где до сих пор не учтены возрастные изменения при переходе из класса в класс, не определены важнейшие задачи каждого этапа обучения родному языку и не разработаны методические комплексные подходы по решению данных задач.

**ПРЕДМЕТ ИССЛЕДОВАНИЯ** - разработка системы методов, обеспечивающих преемственность этапов обучения армянскому языку в начальных классах.

**ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ** заключается в разработке теоретических основ обеспечения преемственности этапов обучения армянскому языку, разработке методической системы и ее применении в начальной школе.

**НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ.**

- были рассмотрены языковые и методические основы обеспечения преемственности и проанализированы основные задачи по ее обеспечению в процессе обучения армянскому языку в начальной школе;

- преемственность была рассмотрена и протестирована не только с точки зрения сохранения последовательности шагов учебного материала, но и с точки зрения развития психологии, мышления и познания ребенка и выбора видов оценки учащегося.
- были разработаны как содержание материалов программы по обучению армянского языка в каждом классе, так и адаптированный к особенностям каждой возрастной группы комплекс методов, способов и технологий обучения.
- преемственность была рассмотрена с точки зрения психолого-педагогических особенностей переходного этапа учащихся 5-6-х классов средней школы, а также стратегии общего обучения армянскому языку.

**ТЕОРЕТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ.** Были разработаны научно-теоретические и методологические основы, а также методические приемы обеспечения преемственности при обучении армянскому языку как в начальных классах, так и при переходе из начальной школы в среднюю.

**ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ.** Методическая система, обеспечивающая преемственность курса преподавания армянского языка, может быть применена авторскими группами, занимающимися разработкой программ и учебников, а разработанный комплекс заданий смогут применять учителя в качестве учебного материала в процессе преподавания. Предлагаемый подход обучения применим также при преподавании других предметов.

**АПРОБАЦИЯ ИССЛЕДОВАНИЯ** – опытное обучение было проведено в школах № 53, № 114, негосударственном учебном комплексе “Аргназан”. Диссертация была обсуждена на заседаниях кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, в сборниках материалов республиканских и международных научных конференций. Основные положения исследования отражены в опубликованных научных статьях.

**СТРУКТУРА И ОБЪЕМ ИССЛЕДОВАНИЯ.** Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, трех таблиц и приложения. Работа содержит 181 страницу.

## **MKRTCHYAN GAYANE VOLODYA**

# **SCIENTIFIC AND METHODOLOGICAL BASIS OF THE PROBLEM OF SUCCESSION OF NATIVE LANGUAGE TEACHING IN ELEMENTARY SCHOOL**

Dissertation for the degree of candidate for pedagogical sciences, specialty 13.00.02 -  
Methodology of Teaching and Education (the Armenian Language).

The defence of dissertation will be held at 14:00 on the 3th of July 2014, at the session  
of the Special Board 020 HAC to award scientific degrees at the Armenian State  
Pedagogical University after Kh. Abovyan: 0010,17 Tigran Mets, Yerevan.

## **SUMMARY**

**THE RELEVANCE OF THE RESEARCH:** Methodical great research existing up to now in elementary schools has been reflected to didactic separate parts and to the methodology of elementary school in general but in the result of educational new reforms the succession of teaching phases still needs deep research.

Thus the relevance of the research is connected with the problems of native language teaching in elementary school:

- Still in the methodology of primary education in 12 –year-old secondary school it's not taken into account the age changes from grade to grade passing.
- It's not focused the priority problems of native language teaching in each phase, it's not worked out methodical complex approaches for their solution.

**THE SUBJECT OF THE RESEARCH:** The system of methods and means providing the succession of native language teaching phases in elementary educational system.

**THE AIM OF THE RESEARCH:** To work out the theoretical bases for providing the succession of native language teaching phases, to create methodical system and practice it in elementary classes.

**THE NOVELTY OF THE RESEARCH:**

- a) In the process of providing the succession of native language teaching phases linguistic and pedagogical bases are observed.
- b) The problems of the succession of native language teaching phases are analyzed in elementary school.
- c) The succession is observed and experimented not only to preserve educational content in successive steps, but also to develop pupils' physiological and thinking ability from the point of view of choosing marking forms.
- d) It's worked out the content and teaching methods of native language teaching program, tactics and technology complex corresponding to the age group features.
- e) The succession is also observed in the 5-6<sup>th</sup> grades of the middle school in the passing phase by the psycho-pedagogical peculiarities, by argument on integrated native language teaching strategy.

**THE THEORATICAL VALUE OF THE RESEARCH:** The methodical system of providing the succession of native language teaching can be used by the authors of programs and textbooks, but the complex of worked out items can be used by the teachers as a training material in order to make the training process more effective and stimulating.

The proposed teaching approach is applicable for other subjects' teaching.

**THE PRACTICAL VALUE OF THE RESEARCH:** It's done in piloting schools, in the meeting session of the department of Native language and its methodology of teaching at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, in scientific conferences and in the scientific articles.

**THE STRUCTURE AND VALUE OF THE RESEARCH:** The dissertation is consisted of 181 computer pages. It includes Introduction, three Chapters, Conclusion, as well as Bibliography, 3 tables and appendixes.